Հաստատում եմ՝ _____Մ.Արիստակեսյան
30.08.2022 թ. Մանկ.խորհրդի հ. 01 որոշում

Կոստան Զարյանի անվան հ. 117 հիմնական դպրոց ՊՈԱԿ

2022-2023 ուստարի
Ուսումնական խմբակ
«Ես ապագա նկարիչ եմ»

Ուսուցչուհի՝ Վ.Մուրադյան

Ստուգված է՝ _____ Փոխտնօրեն Վ.Մուրադյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արվեստն ի զորու է ցանկացած երևույթ վերափոխել գեղեցիկի: Այն կարող է իշխել և ներշնչել մարդկանց, մղել ցանկացած գործողությունների:

Արվեստը ոչ միայն արթնացնում է հայրենասիրական զգացումներ, այլև ծանոթացնում է ուրիշ ժողովուրդների ավանդույթների և պատմության հետ:

<<Արվեստի պատմություն>>

ՀԵՂ.՝ ԵԼԵՆԱ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

Կերպարվեստը՝ որպես հանրակրթական դպրոցական ուսումնական առարկա, կարևոր դեր ունի աշակերտների համընդհանուր դաստիարակության գործում:

Կերպարվեստի դասավանդման ժամանակահատվածում գործնական կարողությունների և գեղարվեստական ընկալման հմտությունների ձեռքբերման ընթացքում աշակերտների մեջ զարգանում են հետաքրքրություններ արվեստի ստեղծագործությունների, ինչպես նաև շրջապատի նկատմամբ գեղեցիկը նկատելու, զգալու, գնահատելու ունակություններ:

Տարիներ շարունակ մեր դպրոցում գործում են ինչպես արտադպրոցական, այնպես էլ արտադասարանական խմբակներ:

5-7-րդ դասարաններում աշակերտները ձևավորում են սեփական նախասիրություններ:իմ դասավանդած առարկայի՝ կերպարվեստի համար շատ կարևոր է, որ նա աշակերտը ունենա իր շրջապատը գեղեցիկ դարձնելու պահանջ և կարողություն, ակտիվ մասնակցի դասարանի, դպրոցի մշակութային կյանքին:Ունենա ստեղծագործական երևակայություն, արվեստի նկատմամբ հետաքրքրասիրություն, գրագիտություն ու ճաշակ:

Նկատի առնելով այս ամենը՝ ստեղծել եմ կերպարվեստի խմբակ 5-7-րդ դասարանների համար <<Ես ապագա նկարիչ եմ>> վերնագրով:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ շեշտը դնելով սովորողի նախասիրությունների, զարգացման, գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացման վրա:

<<ԿԵՐՊԱՐՎԵՍՏ>> ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

(շաբաթական 3 ժամ, տարեկան՝102ժամ)

Բնօրինակից պատկերում(30ժամ)
Նպատակը
Զարգացնել աշակերտների մոտ երանգային և գունային աստիճանավորմամբ ձևով ոչ բարդ առարկաների ծավալի ստացում: Երանգի միջոցով պատկերել լույսի և ստվերի հարաբերակցությունը:
Խնդիրներ
Բնանկարի գծանկարչական պատկերումը 3-4 պլանով, առարկաների հեռանկարանային կրճատմամբ:Արտահայտել մի շարք հույզեր, նկարին հաղորդել տարածության խորություն երանգների միջոցով:
Վերջնարդյունքներ
Կարողանան ստեղծել պարզագույն նատյուրմորտներ, որոնք դասավորված են ճակատային դիրքով՝ հաշվի առնելով մի առարկայի վարագուրումը մյուսով:
Բովանդակություն
1.Նատյուրմորտ 15ժամ • Տեղեկություն նատյուրմորտի մասին 1ժամ • Նատյուրմորտի պատկերում բնօրինակից 4ժամ • Պարզագույն նատյուրմորտ 3ժամ • Դեկորատիվ նատյուրմորտ 2ժամ • Մրգերով նատյուրմորտ 3ժամ 2. Բնանկար 4ժամ • Ծանոթացում, քննարկում 1ժամ • Բնանկարի պատկերման տարրերը (լույս, ստվեր) 1ժամ • Գործնական աշխատանք 2ժամ 3. Դիմանկար 6ժամ • Ինքնանկար 3ժամ • Աշխատանք բնօրինակից (մայրիկիս, ընկերոջս դիմանկարը) 3ժամ 4. Կենցաղային ժանր 6 ժամ • Տեղեկություն գրաֆիկայի, գծանկարչության, գեղանկարչության և քանդակագործության մասին 4ժամ • Կենցաղային առարկաների պատկերում 2ժամ

Թեմատիկ նկարչություն 29 ժամ
Նպատակը
1. Թեմատիկ նկարներում կարևոր է կարողանալ արտահայտել բովանդակությունն ու իմաստը:

2. Զարգացնել, ակտիվացնել ստեղծագործական ներուժը, աշխատանքի պլանավորումը, ձևավորել արդյունքների ստացման կարողությունները
Խնդիրներ
Ծանոթանալ հիմնական աշխատանքի համար նախանկարի կատարման առանձնահատկություններին:Ստեղծագործաբար մոտենա իր գեղարվեստական գործունեությանը, հանդես գա հետաքրքիր մտահղացումներով և իրագործի դրանք:
Վերջնարդյունքներ
Կարողանալ ստեղծել ծավալային կոմպոզիցիաներ:
Բովանդակություն
1.Գույն և երանգ 6ժամ • Պատկերի ստեղծումը գույների միջոցով 2ժամ • Մի գույնից անցում մյուսին 1ժամ 2Գիծ, ուրվագիծ 6ժամ • Գծերի բնույթը (սահուն, հստակ) 2ժամ • Թեմատիկ գծանկար 3ժամ 3. Կոմպոզիցիա 6ժամ • Գծային կոմպոզիցիա 2ժամ • Թեմատիկ կոմպոզիցիա Աստվածաշնչյան թեմայով 2ժամ • Հեքիաթի ձևավորում 3ժամ 4.Ապլիկացիա 6ժամ • Առարկայական ապլիկացիա 3ժամ • Զարդաեղանակային ապլիկացիա 2ժամ • Ապլիկացիոն աշխատանք 1ժամ 5.Հեռանկար 5ժամ • Հիմնական հասկացություն հեռանկարի մասին 1ժամ • Գծային հեռանկար 1ժամ • Գունային հեռանկար 2ժամ • Տոնային հեռանկար 2ժամ

Դեկորատիվ նկարչություն 26 ժամ
Նպատակը
Զարգացնել և ծանոթացնել սովորողներին զարդանախշի ծագման պատմությանը, զարդանախշի բազմաթիվ տեսակներին և դրանց օգտագործմանը տարբեր ազգերի կերպարվեստում և ճարտարապետության մեջ:
Ծանոթանալ դեկորատիվ զարդանախշերի արտացոլմանը պատկերների կրկնությամբ;
Վերջնարդյունքներ
Կարողանան ստեղծել զարդանախշի պատկերում՝ առարկանեի դեկորատիվ ուրվագծային պատկերմամբ:
Բովանդակություն
1.Զարդանկար 10ժամ • Ծանոթացում, վերլուծություն 1ժամ • Նախշային զարդանկարի սխեմատիկ պատկերում 2ժամ • Խեցեղեն անոթների նկարազարդման զարդանախշի սխեմատիկ պատկերում 3ժամ

2.Զարդաքանդակ 8ժամ

- Զրույց զարդաքանդակի մասին 1ժամ
- Խոհանոցային սպասքի (մատուցարան, սկուտեղ, ջրաման և այլն) նախանկար բուսական և կենդանական ձևերի և զարդանախշերի օգտագործմամբ 3ժամ
- Դեկորատիվ պանոն << Հեքիաթների աշխարհում >> (խմբային աշխատանք) 2ժամ
- Հնագույն խեցե իրերը զարդարող նախշերի կրկնօրինակում 2ժամ
- Տեղեկություն, հայկական զարդաքանդակների դիտում, քննարկում 3ժամ
- Եկեղեցու պատկերում 3ժամ

3.Կոմպոզիցիա երկրաչափական պատկերներով 8ժամ

- Ստեղծել կոլաժ 2ժամ
- Բացիկների, համադպրոցական և դասարանային միջոցառումների պատրաստում 2ժամ
- Նկարների շրջանակների պատրաստում 2ժամ

Զրույց կերպարվեստի մասին 17ժամ
Նպատակը
Զրույցի միջոցով զարգացնել բարոյական արժեքային համակարգի ձևավորումը:Զարգացնել աշակերտների գեղագիտական ճաշակը:
Խնդիրներ
Թեմային համապատասխան առաջադրված հարցը ընկալել և քննարկել;
Վերջնարդյունքներ
Տարբեր նկարիչների նկարների վերլուծություն, ինտերիերի և էքստերիերի պատկերման առանձնահատկությունների ըմբռնում:
Բովանդակություն
1.Կերպարվեստի ժանրերը 5ժամ • Դիմանկարի ժանր 1ժամ • Բնանկարի ժանր 1ժամ • Նատյուրմորտի ժանր 1ժամ • Անիմալիստական ժանր 1ժամ • Դիցաբանական ժանր 1ժամ 2.Կերպարվեստի տեսակները 5ժամ • Գեղանկարչություն 1ժամ • Գծանկարչություն 1ժամ • Քանդակագործություն 1ժամ • Դեկորատիվ կիարառական արվեստ 1ժամ • Դիզայն 1ժամ

Տարեվերջյան հաշվետվություն

Կանցկացվեն այցելություններ պատկերասրահներ, ցուցահանդեսներ, քաղաքի տեսարժան վայրեր:

Բանավեճեր՝ <,Որն է արվեստների թագուհին>>, <<Իմ սիրած արվեստագետը>>, Կոմպոզիցիաների ստեղծում, քննարկում, կոլլաժների պատրաստում:

Դպրոցի ցուցահանդեսների բարեկարգում և գեղեցիկ աշխատանքների ցուցադրում, համալրում: